

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

ԼՂՀ ֆինանսների նախարարության

ՖՎ վարչության 2009թ. կատարած

աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 2009թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 105 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 20 բյուջետային հիմնարկում, 43 պետական ոչ առևտրային կազմակերպությունում, 22 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում, 4 ոչ պետական ձեռնարկություններում, 8 հասարակական կազմակերպություններում, 4 քաղաքային և 4 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 81134.6 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 4811.2 հազ.դրամ,
- անօրինական դուրս գրումներ, վճարումներ, ծախսեր՝ 11828.3 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 10008.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 1820.0 հազ.դրամ,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր, որը ենթակա է վերականգնման բյուջե՝ 166.0 հազ.դրամ,
- ավել նախատեսված գումարներ, որը ենթակա է վերականգնման բյուջե՝ 3441.0 հազ.դրամ,
- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր, որը ենթակա է վերականգնման բյուջե՝ 1740.8 հազ.դրամ,
- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 30913.5 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 30672.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 241.2 հազ.դրամ,
- նորմերի խախտումներ՝ 2133.0 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 1946.3 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 186.7 հազ.դրամ,
- գերածախս՝ 735.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 673.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 61.4 հազ.դրամ,

- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 4654.9 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 4568.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 86.9 հազ. դրամ,
- ավելցուկ՝ 20503.7 հազ.դրամ,
- պակասորդ՝ 207.0 հազ.դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 53190.8 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 4836.9 հազ.դրամ, իսկ ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 23106.9 հազ.դրամ:

Ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները կազմել են 207.0 հազ.դրամ, որից 2 բյուջետային հիմնարկներում՝ 48.0 հազ.դրամ, 3 պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 132.1 հազ.դրամ, 5 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում 26.9 հազ.դրամ:

Ավելցուկը կազմել է 20503.7 հազ.դրամ, որից՝ 4 բյուջետային հիմնարկներում 3598.9 հազ.դրամ, 13 պետական ոչ առևտրային կազմակերպությունում 16187.8 հազ.դրամ, 6 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում 547.0 հազ.դրամ, 1 հասարակական կազմակերպությունում 170.0 հազ. դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 81134.6 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 37965.1 հազ.դրամ, որից՝ պետական բյուջե՝ 16422.1 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 4601.1 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 16941.9 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 43169.5 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 36768.7 հազ.դրամ, համայնքային բյուջեին՝ 235.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 6165.0 հազ.դրամ:

Նախորդ՝ 2008թ. կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2009թ. վերականգնվել /վերաձևակերպվել է 50212.5 հազ.դրամ, որից պետական բյուջե՝ 32755.1 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 17457.4 հազ.դրամ:

Ընդամենը 2009թ. պետական բյուջե է վերականգնվել 49177.2 հազ.դրամ, որից 2009թ. արդյունքներով 16422.1 հազ.դրամ, 2008թ. ապառքի գումարներից 32755.1 հազ.դրամ: Համայնքային բյուջե է վերականգնվել 2009թ. արդյունքներով 4601.1 հազ.դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 34399.3 հազ.դրամ, որից 2009թ. արդյունքներով 16941.9 հազ.դրամ, 2008թ. ապառքի գումարներից 17457.4 հազ.դրամ:

Ստուգման արդյունքներով իննը հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ ԿԱ ոստիկանություն և հինգ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ Գլխավոր դատախազություն: